

„ՄՈՒՐՃ“-Ի ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԱՒԱԼՑԱՅ. պ. Զամոյկանցին. Ուղղագրութեան մասին Զեր գրածը մեզ չը համոզեց: Դուք, որ ալիքան սիրում էք ո՛ տառը, որտեղ նա աւելորդ է, մենք ինչ մեղաւոր ենք. Շատերը Գերմանիայում ափսոսում են իրանց ը և ի տառերի բացակայութիւնը աչն բառերի մէջ, որտեղ նորա միայն պոչերի դեր են խաղում. բայց ալիք չը խանդարեց Պոռսիայի կառավարութեան, որ ալիք տառերը գործ չ'ածւեն պաշտօնական գրութիւնների մէջ, օրինակ, Tot, Vorrat փոխանակ Todt, Vorrath և նման բառերում: Նոյնը գործեցին պարբերական հրատարակութիւններից չատերը՝ Koelnische Zeitung քաղաքական լրագրից սկսած մինչ Westermanns Monatsschrift զուտ գրական-վիպական ամսագիրը: Դուք, որ ալիքան ծանր էք վերաբերում դէպի ալիքան սնտոի սովորութիւնները, ինչ կ'անէիք՝ եթէ Գրիգոր Լուսաւորչի ժամանակ Զեղ առաջարկէին Զեր սիրած կոռքերից հրաժարւել: Մենք կարծում ենք, որ ոչինչ բան չը բարդող և միևնոյն ժամանակ պարզող և հեշտացնող փոփոխութիւնները օգտակար են:

ԹԻՖԼԻՍ. Տիկին Եղիսաբէթ Տէր-Դաւթեանցին: Շնորհակալութեամբ ստացանք Զեղնից 5 բուլլի չօդուտ «Մուրճ»-ի ֆոխատու-իւնայողական դանձարանի: Անցկացրինք մատենի մէջ:

ՆՕՎՕ-ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ. Ուսուցիչ Յ. Կ.-ին. Շնորհակալութիւն Զեր ցանկութիւնների համար: Աղբիւրի համար ուղարկածը տեղ հասցրինք:

Մ Ե Ր ԲՈՂՈՐ բաժանորդներին: Մեր խոստացած չօղածը, որ պիտի դուրս գար այս համարում, կը դուրս գալ եկող Ռեում: Նա կրելու է վերնագիր՝ «Մուրճ»-ը որպէս հալկական օրդան և խօսելու է «Կոռւնկ»-ի և մասամբ «Նոր-Դար»-ի մասին: Մի առանձին չօղած նւիրած կը լինի «Փորձ»-ին և «Արձագանք»-ին և առհասարակ պ. Արզար Յովհաննիսեանի գործունէութեան և կրելու է վերնագիրս՝ «Մուրճ»-ը որպէս գրական օրդան:

ՀԱՇՏԱՐԻԱՆ. պ. Վ.-ին. Ձեր այս երկրորդ անգամ ուղարկածը առաջինից չաջող է, բայց դեռ ոչ բաւականաչափ՝ «Մուրճ»-ում զետեղելու համար:

ՕԴԵՍՍԱ. պ. Ճ.-ին. Ուղարկւած ոտանաւորների ժամը «Աղբիւրի»-ն է. բարձր լիւրիզմ չը կալ մէջը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Ուսանող. Կարելի է տպւի. երկրորդ անգամ ուղարկածի մասին գաղափար չենք կազմել:

Մ Ե Ր Ը Ն Թ Ե Ր Գ Ո Ղ Ն Ե Ր Ի Ն. Պ. Պռօշեանցի չօքէլեանի առիթով, որպէս լսում ենք, կազմակերպւում է առանձին մասնաժողով, որին կը հասնեն բոլոր նւէրները չօքէլեարի օգտին, որպէս նաև ուղերձները: Յոյս ունինք, որ այդ մասնաժողովը չուտով իրան չալտնի կը կացուցանէ հասարակութեան: Մեր ընթերցողներին չալտնում ենք, որ «Մուրճ»-ի խմբագրութիւնը ընդունելու է ամեն տեսակ նւէրներ պ. Պռօշեանցի օգտին և հասցնելու է մասնաժողովին, երբ վերջինս կազմակերպւած կը լինի:

«Ի վ ե Ր Ի ա» վրայ լրագրի խմբագրութեան. Պր. Գ. Չմշկեանի չօղւածի առիթով, որ զետեղւած էր «Մուրճ»-ի № 1-ում, արգոյ խմբագրութիւնը մի առաջնորդող ունէր գրած լրագրի № 27և մի ֆէլետոն № 33-ի մէջ: Ֆէլետոնը աչքի տակ չ'ունեցանք, բայց առաջնորդողը թարգմանել տւինք և կարդացինք: Դուք հերքում էք պ. Չմշկեանի պնդածը, թէ «Պէպօն» վրաց բեմի վրայ վերացած է ներկայացում: Մենք այդ վէճի մէջ խառնւելու ոչինչ չ'ունինք. պ. Չմշկեանն ինքն է պատասխանատու իւր խօսքերի համար: Եթէ ճիշդ չէ նորա պնդածը, ինչպէս Դուք էք վկայում, — «Մուրճ»-ի խմբագրութիւնը ոչինչ չ'ունի դորա դէմ ասելու. թէպէտ, միւս կողմից, մենք ոչ մի պատճառ չ'ունինք կասկածելու պ. Չմշկեանի տենդենցիալի ուղղամտութեան մասին: Բայց այդ խնդրի առիթով, Ձեր առաջնորդողում չալտնում էք մտքեր, որ մենք չենք կարող ընդունել: Իբր թէ պ. Սունդուկեանցի դրամաները զօրութիւն չ'ունեցան վրաց բեմը վերակենդանացնելու համար այն պատճառով, որ, ասում էք Դուք, եթէ այդ ուժն ունենար Սունդուկեանցը, պէտք է որ առաջ հայկական բեմը վերակենդանացնէր. մինչդեռ, չարունակում էք Դուք, հայկական բեմը մինչ հիմալ էլ չը կալ: Մենք մեզ կոմպետենտ չենք համարում վճիռ տալու, թէ ո՞ր աստիճանի արդարացի է պ. Չմշկեանի ասածը պ. Սունդուկեանցի մասին վրաց բեմի վերաբերմամբ, բայց այս կ'ասենք, որ Ձեր ապացոյցը թու է:

Դուք չ'իմիտում էք և չէք զանազանում բեմը թատրոնից: Շնորհիւ ի միջի ալլոց պ. Սունդուկեանցի, մենք ունինք արդէն հիմնաւոր սկիզբ թատրոնական գրականութեան և դերասանական չլօլա, որի վերալ աշխատել են տասնեակ տարիներ:

Մշտական բեմ չունենալը թատրոն չունենալ չէ նշանակում և, ընդհակառակը, մշտական բեմ ունենալը թատրոն ունենալ չէ նշանակում: Մեզ թւում է, թէ մենք՝ հայերս, թատրոն ունինք առանց մշտական բեմի, իսկ դուք՝ վրացիներդ, մշտական բեմ ունիք առանց թատրոն ունենալու: Ի հարկէ, մենք երկուսս էլ զեռ շատ աղքատ ենք, մենք՝ թատրոնով, դուք՝ բեմով: Բայց ոչինչ չը կալ դարմանալու, եթէ հայկական թատրոնական մի պիես, վրաց լեզուով թարգմանած, վրաց բեմին վերակենդանութիւն տալ, իսկ հայկականին՝ ոչ: Այդ մի երեւոյթ է, որ կապ ունի մեր երկուսիս ազգերի բնաւորութեան և կամ, եթէ ուզէք, հոգեբանութեան հետ: Այն ինչ մենք միայն կարողւմ ենք, դուք միայն ներկայացնում էք: Մենք շատ աւելի մտածում ենք մեր գրականութեան վերալ, դուք՝ բեմի վերալ: Ահա թէ ինչպէս կարող է պատահել, որ, առանց բեմը ի նկատի առնելու, մենք մեծ աջողութեամբ կարողանում ենք Շիրվերի և Շէքսպիրի թարգմանութիւններ ստեղծել և դորանով ընթերցող հասարակութեան հետաքրքրութիւնը չարժեք. իսկ դուք, մշտական բեմ ունենալով հանդերձ, մինչ օրս ալլալիսի գրական քաջագործութիւն կատարած չէք, թէպէտ և ձեր բեմի վերալ Համլէտ էլ է ներկայացւում: Ահա թէ ինչո՞ւ Ձեր խօսքը, թէ Սունդուկեանցը նախ պէտք է հայկական բեմը վերակենդանացնէր, որ կարողանար վրաց բեմի վերալ նոյն աղ-դեցութիւնը ունենալ—ալդ խօսքը ասում ենք մեր աչքում ուժ չունի:—Փակապօծի մէջ ասենք, որ Դուք դուր տեղին էք հեղ-նում մեզ որ մենք Սունդուկեանցին բարձր տեղ ենք տալիս, ի հարկէ, Ձեր հեղնութիւնը հիմնւում է «հանճար» խօսքի վերալ, որով իբր թէ կնքում ենք պ. Սունդուկեանցին: Այդ նորանիցն է, որ մեր «տաղանդ» և «քանքարաւոր» խօսքերը Դուք հանճար և հանճարաւոր էք թարգմանած: Մենք ուրեմն մեղաւոր չենք դորանում:—Վերջացնելով մեր խօսքը, պարտք ենք համարում հաւատացնել ի վերիպի արգոյ խմբագրութեան և առանձնապէս բաղմամբաստակ իշխան Իլիա Չավչավա-ձէին, որ, տպելով պ. Չմկեանի չալոնի տողերը, մենք ոչ մի բոպէ չենք կամեցել դորանով անուղղակի կերպով որոշել մեր մտածողութեան եղանակը մի ազգի մասին, որի հետ դրացիա-կան շխտակ լարաբերութիւններ ունենալը «Մուրճ»-ի խնամք-ներկց մէկն է և կը լինի հաճապադ:

Կովկասի

Հալոց Բարեգործական Ընկերութեան խորհրդին: Խմբագ-րութիւնս ստացաւ հինգ անդամակցական վճար՝ 5-ական բուրլի ամեն մէկը:

Խմբագիր-Հրատարակիչ՝ ԱՌԵՏԻՔ ԱՐԱՄԻԱՆԵԱՆՑ:

